

բերութեամբ մը բռնեց, եւ ականջէս շնչեց. «Ուրիշքմ Ռեիլըն...»

Ասիկա զիս իսկոյն սթափեցուց: Անծանօթին տարօրինակ ընթացքէն աւելի, որով զիս զգուշացնելու համար մատը դէպ' ինձ կ'ուղղէր, կը վաղցնէր զիս ձայնին խտտութիւնը: Թեթեւ, գաղտնի շնչոցով մը այդ քանի մը վանկերը կը թնդային ականջիս մէջ, որոնք ինձի այնքան ծանօթ էին եւ հոգիիս մէջ շատոց աներեւու-թացող հազար յիշատակներ արթուն կ'ընէին, կարծես Էլեկտրական ոյժէ մը զարնուած:

Հալիւ ինքզինքս գտած էի, երբ օտարականը անհետացած էր:

Թէեւ այս դէպքը իր ազդեցութիւնը չէր պակ-տեցնիր անհանգիստ երեւակայութեանս վրայ, սակայն քիչ ժամանակի համար էր: Անծանօթը թէեւ անխոնջ կերպով փնտոցցի, որ այդպէս առանց կանչուած ըլլալու գործերուս կը խառնուէր եւ որուն անին մասին չէի կրնար խաբուիլ, սակայն թէ ո՞վ էր Ուրիլըն, եւ ուրկէ կու գար, ու գաղտնի դիտաւորութիւնը ինչ էր, հարցումներ էին, որոնց պատասխան չէի գտներ, որքան ալ այդ մասին յոգնէի:

Միայն այսքան մը իմացայ, որ իր ընտանի-քին մէջ պատահած դժբախտութեան դէպքի մը հետեւանքով նոյն օրը, որ ես փախած էի, ան ալ Գոկտոր Բրանսօրիի դպրոցը ձգած էր:

Սակայն, ինչպէս ըսի, վերի պատահածը իսկոյն մտոցայ. իտընէն մեկնիլու կը մօտենար, եւ ծրարկը՝ Օթսֆորդի համալսարանը մտնելու՝ զիս կը զբաղցնէր բոլորովին:

(Շարունակելի)

Բրդ. ՅԱՎՈՐ-ԳՐԻԳՈՐ ԷՏԻԱՐ Ա. ՊՈՅ

Գ Ի Տ Ա Վ Ա Ն

Ի Ն Զ ՈՒ Ի Ա Ս Տ Ղ Ե Ր Ը

Բ Ա Յ Խ Փ Ի Կ Կ Ը Խ Ա Ղ Ա Ն

(Շար. տես Բազմ. 1928 էջ 178)

Ե. ՀՐԱՏԻ ՄԻՋՈՑԱԻ

ԵՐԿՐԱՐԵԻ ՀԵՒԱԻՌՈՐԻՓԻԻՆԸ ԳՏԵՆԼ

Այս մուրակին արտակերպողութիւնը փայլածուէն վերջը մեծ ըլլալով՝ շատ աւելի ճշդութիւն կը պահանջուի տուեալները ճիշդ գտնելու համար: Արտակերպողութիւն կը կոչուի մէջ ի մէջ երկու բու-

լորակներուն որ նոյն կերպով չունին: Հրատի արտակերպողութիւնը Երկրինէս 5 անգամ աւելի է. այս գիտնալով մեծ ուշադրութիւն կը պահանջուի հաշիւներուն մէջ: Հրատը երեք զանազան երկրամերձ ունի, նոյնպէս նաեւ երեք զանազան երկրանջատներ: Երկրամերձութիւններն են 9±,8 միլիոն Հգմ., 73,1 Մ. Հգմ. և կամ 52,9 Միլիոն Հգմ. և այս վերջինս ամէն 33 տարին անգամ մը կը պատահի և վերջին անգամ 1924ին պատահեցան: Օգոստոս 23ին 58.7 միլիոն Հգմ. մօտեցած էր և աւելի մերձեցումի պիտի սպասենք 1967ին. իսկ ընդհակառակն արեւանջատներն են 350,9 միլիոն Հգմ. և 376,9 և 397,8: Ահա այս ահագին տարբերութեան պատճառաւ է որ իրճմտօրէն ընելու է հաշիւները, որպէս զի վրիպակներէ զերծ ըլլայ. մեր հաշիւները հոս դնենք.

Հրատ արեւանջատի	8,3948867
Հակշօ. 31°24'0",443	9,7866185 (—10)
Երկրիս երկրանջատի նշանակն	8,1805052
Հրատ արեւամերձի	8,3136461
Հակշօ. 35°26'41",95	9,8523857 (—10)
Երկրիս արեւամերձի նշանակն	8,1660318
Հրատ միջին հեռաւորութիւն	8,3561638
Հակշօ. ի 33°16'38",3	9,8171005 (—10)
Երկրիս միջին հեռու. նշ.	8,1732638

Ուրեմն այս թիւերը նոյն հեռաւորութիւնը ցոյց կու տան ինչ որ նախորդ յօդուածին մէջ գտած էինք, բայց մեզի միջինն է էական, որուն տեսանկիւնն է 8",836384:

Թիւերու և տեսանկեան այս նմանութիւնը, ըլլայ լուսնով, ըլլայ ներքին թէ արտաքին մուրակներով, որոնք Արիստարքի եղանակաւ հաշուեցինք՝ ամէնքն ալ նոյն տեսանկեան առաջնորդեցին:

Զ. ԱՍՏԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Հոս կարելի է հարցնել. արգիօք Արիստարքոսի եղանակաւ միայն կը գտնուի Արիսու հեռաւորութիւնը: —

ա. Աստեղագէտներ երկայն ատեն երբոր չյաւնորոգեան Արիստարքի եղանակը գոր-

ծածել գտնելու համար Երկրաբան հեռա-
 տրուսթիւնը, Հալլէի պնդումին վրայ ձեռք
 առին «Անցք Արուսեկի Արեւու սկաւա-
 ռակի առջեւէն» հաշուել, ըստ այսմ են,
 թաղրենք որ Երկրիս վրայ
 ըլլան երկու տեղ իրարմէ հե-
 ռու Արուսեկի անցքի ժամա-
 նակ. ըլլան Ա և Բ և Գ Ա-
 րուսեակը: Ա պիտի տեսնէ Գ
 ստուերացած Արեւու վրայ Ա՛
 տեղը և Բ պիտի տեսնէ Բ՛
 կէտի վրայ և եռանկեանց համեմատու-
 թիւնը գտած ըլլալով՝ որ է գրեթէ 0,37,
 և ապոյն Արեւու վրայ ըլլալով 48 (ա-
 ւելի ճշդը 47,76425) բազմապատկելով
 0,37 թուին հետ առաջինով կ'ունենանք
 8",88, երկրորդով 8",8363844:

բ. Կայ գեղեցիկ գիւտ մ'ալ զոր Հոգե-
 մէք Գանիացին գտաւ: Սա Լուսնթագի
 արբանեկաց հոլովումներուն ցուցակը շի-
 նած էր: Իսկ Գասսինի՝ պարիսեան դի-
 տարանի տեսուչը՝ իօ Լուսնթագի առաջին
 արբանեկին մոլորակի ստուերէն ազատու-
 մի հաշուէն մէջ տարբերութիւն մը կը
 գտնէր որ չէր համապատասխաներ միշտ
 «42օ28431՝»ի. կանչեց զՀոգեմէք ի Պա-
 րիս, և սա յետ երկուսը դիտողութեանց
 գտաւ որ այս տարբերութիւնը կը կայա-
 նար Լուսնթագի Երկրամերձին և Երկրան-
 ջատին մէջ և տարբերութիւնն էր 16'26",
 որով լոյսը այսչափ ժամանակ կը դնէր
 կարելու համար Երկրիս պարունակին տրա-
 մագիծը. հետեւաբար, կէսը՝ 8'13" չափ ժա-
 մանակի պիտի դնէ Արեւէն մեզ լոյսը հաս-
 նելու: Եւ այս թիւս երկվայրկեաններու
 վերածելով կ'ունենանք 493'. Բայց ներ-
 կայիս այս թիւն ալ սրբագրուեցաւ և զտ-
 նուեցաւ 498",37ի և 498"57 թուոց մէջ:
 Բայց վերջնական չըլլալով այս թուին
 որոշումը, եթէ դնենք թէ ըլլայ 497",25
 և լոյսի սաստկութիւնը 299700 Հգմ.,
 կ'ունենանք 149025825 Հգմ. որ շատ
 հեռու չէ մեր նշանակած թուէն:

գ. Հոգեմէքի այս գիւտէն կէս դար վերջը
 ուրիշ գիւտ մ'ալ Բրատլէյ կ'ընէր: Սա
 ծնած 1692ին, և 1731ին տեսուչ կար-

գուած կրինիչի դիտարանին, 1728ին
 աստղերու տարեկան շարժումը փնտռած
 ժամանակ՝ գտաւ ուրիշ երեւոյթ մը զոր
 չիդոմն լուսոյ (aberration) կ'անուանեն:
 Աստղագէտները կը գործածեն այս բառս
 այն երեւոյթին որ հետեւանք է բաղկա-
 ցած շարժումներու լուսոյ ծաւալման և
 Երկրիս շրջաբերական շարժման Արեւուն
 շուրջը, որ մեզի տեսցնել կու տայ աս-
 տղերը տարբեր ուղղութեան վրայ երբ
 տեսողին աչքը ուղղուած է դիտուած աս-
 տղին: Բրատլէյ ի սկզբան չկրցաւ մեկ-
 նութիւն տալ. բայց երբ օր մը Թամիզ
 գետին եզերքը կը շրջագայէր, դիտեց թէ
 շարժուն նաւերուն հողմուղղիչները նոյն
 ուղղութիւնը էունէին, ինչ որ խաբարեալ
 նաւերունն էր: Այս պարզ դիտողութիւնը
 իր բազմամեայ ապարդիւն մնացած դիտո-
 ղութիւնը մեկնեց. «Թէ հողմուղղիչի մը
 դիրքը կը նշանակէր յարաբերական շար-
 ժում հովիւն՝ նկատմամբ նաւուն, և ոչ
 բացարձակ ուղղութիւն օդի հոսանքին»:

Հաշիւ ըրած են որ լուսոյ արագու-
 թիւնը 10000 անգամ աւելի է քան Եր-
 կրիս շրջաբերական շարժումը Արեւուն
 չորս բոլորը և կրնանք գտնել հետեւեալ
 կերպով: Եթէ նշանակենք շ. շատուիդ
 Երկրիս պարունակին՝ ենթադրելով առ այ-
 ժմ երկրիս պարունակը բոլորակ քան
 թեքատ. և լոյսը տեսանք որ կ'ընթանայ
 498" կամ 497"25, որով երկվայրկեանի
 մէջ պիտի կտրէ $\frac{\zeta}{497 \cdot 25}$: Միւս կողմէն,
 Երկրիս կ'ընթանայ $2\pi z$ մէկ աստղային
 տարուոյն մէջ, որով մէկ օրուան մէջ պիտի
 ընթանայ $\frac{2\pi z}{365,25631}$. և մէկ երկվայր-
 կեանի մէջ պիտի ընթանայ $\frac{2\pi z}{365,25631 \times 86400}$
 և երկու երագութեանց յարաբերութիւնն է

$$\frac{\zeta}{497 \cdot 25} = \frac{365,25631 \times 86400}{\zeta}$$

$$= \zeta \times \frac{365,25631 \times 86400}{497 \cdot 25 \times 2\pi z}$$
 և նշանակով կ'իւլէ.

ζ_2 .	365,25631	=	2,5625976
ζ_2 .	86400	=	4,9365137
ζ կ'իւլէ.	497",25	=	7,9034252 (-10)
\gg	π	=	9,5028501 (-10)
\gg	2	=	9,9989700 (-10)
		=	34,0043566 (-30)
		=	4,0043566

և կու տայ 10150 թիւ մը որ կը նշա-
նակէ թէ լոյսի շարժումը Երկրիս շրջա-
բերական շարժումէն այնքան անգամ ա-
նելի երբազ է և այս թուով կը գտնենք
Թէ Երկրիս միջին երազութիւնն է 24,77
Հզմ. երկվայրկեանի մէջ, փորձած են աս-
տեղագէտները գտնել Երկրարեւ հեռաւո-
րութիւնը, Հըստի տեսանկիւնով, Լուսնի
տեսանկեան անհաւասարութեամբ, Լուսնի
ամսական անհաւասար շարժումով, որոնք
քիչ շատ նման թիւեր կու տան. բայց
Երկրիս շարժումով ոչ որ փորձած է. տես-
նենք թէ այս ալ ինչ արդիւնք կու տայ:

Է. ԵՐԿՐԻՍ ԵՐՁԱԲԵՐԱԿԱՆՈՎ ԳՏՆԵՆԼ
ԱՐԵՆՈՒ ՀՆՈՒԱՆՈՐՈՒԹԻՒՆԵՐԸ

Հաղորդած էի ուրիշ անգամ, 1906ին
Գաղղ. աստեղագիտական ընկերութեան,
թէ կրնանք չափել Երկրիս շրջաբերական
շարժումով Արեւու հեռաւորութիւնը, ձե-
ւացնելով հաւասարաբարուն եռանկիւն մը
արեւամերձի և արեւանջատի օրերուն:

Երկրիս շարժումը ծանօթ ըլլալով գա-
նազան եղանակներով և նոյն իսկ նոյն
օրերու զազաթին անկիւնը նշանակուած
ցուցակներու մէջ, հաշիւը շատ զիւրին կը
լուծուի: Միտայն պէտք է խոստովանել
թէ հաշիւները եղած են ուղիղ գծի վրայ,
մինչդեռ Երկրիս շարժումը իրօք կոր զիծ
մ'է: Բայց ինչպէս անկիւնը շատ փոքր
է, վրիպակն ալ անզգալի կ'ըլլայ: Սա-
կայն միջին հեռաւորութեան հաշուին մէջ
երկրիս շարժման թիւրապը տարիակ է, հե-
տեւաբար աւելի ուղիղ գծի կը մտնեայ
և վրիպակն եւս առաւել փոքր կ'ըլլայ:

Կ'առնուով Երկրիս միջին շարժումը Փլամ-
մարիոնի 1924 տարւոյն տարեցոյցէն, էջ
199, ուր կը դնէ երկվայրկեանի մէջ ընթացք
Երկրիս 29,7660 Հզմ.: Բայց արեւամերձի
այս ընթացքը որ 30,1 է, արեւանջատի
ժամանակ կ'ըլլայ 29,1 կամ քիչ մ'աւելի:

Դարձեալ ծանօթ է մէկ օրուան ըն-
թացքով Երկրիս ձեւացուցած անկիւնն 1
Յունուարին 1°11'0",6 իսկ 1 Յուլիսին
0°57'11",9, որոնք քաղեր էի 1900 տար-
ուան « Connaissance des temps » էն:


Արդ Երկրիս այս երկու ժամանակնե-
րը միայն կարելի է ձեւացնել հաւասա-
րաբարուն եռանկիւն մը, որով խորսի
անկիւններն եւս ծանօթ կ'ըլլան այսպէս
 $\{(180^\circ - 1'11',10'',6) : 2\} = 89^\circ 29' 24'',7$
Յունուարի համար. և Յուլիսի համար ալ
 $\{(180^\circ - 0'57'11'',9) : 2\} = 89^\circ 31' 24'',5$
Այս տունեւոյներով կրնանք հաշուին մէջ
մտնել և կ'ունենանք արեւամերձ և ա-
րեւանջատ հեռաւորութիւնները:

Նշ. 86636,5 × 30,1	Նշ. 6,4163378,58
Նշ. ծոց 89°29'24'',7	9,9999828,40
հակծոց 1°11'0'',6	1,7497111,04 (—10)
Նշանակ արեւամերձի	= 8,1660318

Երջն ոճով և արեւանջատն.

Նշ. 86636,5 × 29,1	6,4016094
Նշ. ծոց 89°31'24'',5	9,9999850
հակծոց 0°57'11'',9	1,7789108
Նշանակ Արեւանջատի	8,1805052 (—10)

Այս եռանկիւնը լուծե-
լու համար հաւասարա-
բարուն եռանկեան տարագն
առինք $\frac{a \sin \beta}{\sin \alpha} = b$



հեռաւորութեան:

Երջն ոճով կրնանք նաեւ միջին հեռա-
ւորութիւնը գտնել՝ վրիպակը փոքր ըլլա-
լով. ուստի միջին հեռաւորութեան մէկ
օրուան անկիւնն է 0°54'29",349 և խա-
րիսիւր 86636,5 × 29,756, կ'իլլէ

Նշ. խորսի	6,4114217
Նշ. ծոց 89°30'18",32	9,9999838
հակ. ծոց 0°59'29",349	1,7618583 (—10)
Նշ. միջին հեռաւորութեան	8,1732638

Այս նշանակ կը համապատասխանէ
149026897,94 Հզմ., և կու տայ իրը
տեսանկիւն 8°,836384:

Բայց միջին հեռաւորութիւնն կը զըտ-
նուի նաեւ $\lambda(1 - \omega)$ և $\mathbb{V}(1 + \omega)$ տարագ-
նեցով որ λ է արեւանջատ հեռաւորութիւն
և \mathbb{V} Թրեւամերձ հեռաւորութիւն և ա արտա-
կեղրոնութիւն է. և սակայն ոչ պակաս նոյն
միջին հեռաւորութիւնը պիտի ունենանք:
Ուրեմն այս ամէն հաշիւները միեւնոյն թիւն
առաջ բերելով մեր եղանակով՝ ցոյց կու
տան հաշուին ճշգրութիւնը, մինչ այլոց հա-
շիւներով թաւական տարբերութիւններ կան,
ինչպէս որ յաջորդին մէջ ցոյց պիտի տանք:
(Շարայարելի) Հ. Խ. ԱՆՍԵՆՏԵ